



ատյանի դատարանի 29.11.2010թվականի վճիռը և «ԳՏԳ» ՍՊ ընկերության հայցը բավարարել մասնակիորեն.

Մարինա Յուրիի Բարսեղյանից, Ստելա Սամվելի Գրիգորյանից և Լիդա Վաչիկի Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԳՏԳ» ՍՊ ընկերության բռնագանձել 7.303.800 (յոթ միլիոն երեք հարյուր երեք հազար ութ հարյուր) դրամ, որից՝ 6.956.000 (վեց միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար) դրամը՝ որպես պարտավորության, իսկ 347.800 (երեք հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր) դրամը՝ որպես մուծված պետական տուրքի գումարներ:

Մարինա Յուրիի Բարսեղյանից, Ստելա Սամվելի Գրիգորյանից և Լիդա Վաչիկի Գրիգորյանից համապարտության կարգով հոգուտ «ԳՏԳ» ՍՊ ընկերության բռնագանձել նաև 6.956.000 (վեց միլիոն ինը հարյուր հիսունվեց հազար) դրամ պարտավորության՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված բանկային տոկոսը՝ որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից մինչև պարտավորության դադարման օրը:

Սույն գործով վճռաբեկ բողոք են բերել պատասխանողներ Մարինա Բարսեղյանը, Ստելա Գրիգորյանը և Լիդա Գրիգորյանը:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի բերվել:

## **2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.**

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում՝ ներքոնշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը սխալ է մեկնաբանել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին կետը, 44-րդ հոդվածի 1-ին կետը, 49-րդ հոդվածը և ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ, 232-րդ հոդվածները:

Բողոք բերած անձինք նշված պնդումները պատճառաբանում են հետևյալ փաստարկներով.

Չնայած Վերաքննիչ դատարանը գտել է, որ Դատարանը լրիվությամբ և բազմակողմանիորեն չի հետազոտել գործի ապացույցները, սակայն հայցը բավարարել է, հաշվի չառնելով, որ հայցվորը չի ապացուցել պակասորդի առաջացումն ու իրենց մեղքը պակասորդի առաջացման մեջ, Դատարան չի ներկայացրել հաշվապահական փաստաթղթերը, Ընկերության գործունեության ստուգման և գույքագրման արդյունքները:

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ պատասխանող կողմի միջնորդությամբ Դատարանը պարտավորեցրել է հայցվոր կողմին ներկայացնել 28.06.07թ. մինչև 12.04.08թ. և 15.01.09թ. մինչև 30.01.10թ. ժամանակահատվածների ապրանքանյութական արժեքների մուտքագրման ու էլքագրման մատյանները, հարկային մարմին և վիճակագրական ծառայություն ներկայացրած հաշվետվությունները, բայց հայցվորը հայտարարել է, որ նշված փաստաթղթերն իրենց մոտ չկան, չեն պահպանվում ու որևէ ապացույց չի ներկայացրել դատարաններ:

Վերաքննիչ դատարանը որոշման մեջ նշել է, որ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ նյութական պատասխանատվությունն առաջանում է այն դեպքում, երբ աշխատանքային պայմանագրի կողմը (գործատուն կամ աշխատողը) չկատարելով կամ ոչ պատշաճ կատարելով իր պարտականությունները, վնաս է պատճառում մյուս կողմին, և շարադրել է 232-րդ հոդվածով սահմանված նյութական պատասխանատվության պայմանները, չնայած հայցվորը չի հիմնավորել, թե ինչու է կայանում պարտականությունների ոչ պատշաճ կատարումը, ինչպես նաև դատաքննության ընթացքում չի ապացուցվել պատճառված վնասի՝ պակասորդի, առաջացումն իրենց կողմից յուրացնելու կամ վատնելու փաստը:

Ըստ բողոքաբերների Ընկերությունը խախտել է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 24.09.2003թ. N 138 հրամանով հաստատված «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգ»-ի պահանջները, որ հայցվորը չի ապացուցել պակասորդի առաջացումը, սակայն Վերաքննիչ դատարանը գտել է,

որ պակասորդը առաջացել է պատասխանողների մեղքով, որ պատասխանողները չեն ապացուցել իրենց մեղքի բացակայությունը:

Բողոքաբերները գտնում են, որ Վերաքննիչ դատարանը սխալ մեկնաբանելով վերոնշյալ նորմերի պահանջները և անհիմն կիրառելով Գերագույն դատարանի N 0023/2009թ. քաղաքացիական գործով ըստ հայցի «Սպորտ» ՄՊԸ-ի ընդդեմ Լիդա Գրիգորյանի՝ 812.000 դրամ բռնագանձելու պահանջի մասին 04.09.2009թ. Ջ.Մուսայելյանի վճռաբեկ բողոքը բավարարելու մասին որոշումը, հաշվի չի առել, որ նշված քաղաքացիական գործով որոշումը նախադեպային չի համարվում, որ այն կոնկրետ հանգամանքներով տարբերվում է քննարկվող գործից, ինչը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Բողոք բերող անձինք պահանջում են բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 28.01.2011թ. դատական ակտը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 29.11.2010 թվականի ընդունած դատական ակտին:

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

**3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Վարձու աշխատողի լրիվ նյութական պատասխանատվության մասին Ընկերությունը 27.05.2007 թվականին պայմանագիր է կնքել Մարինա Բարսեղյանի և Ստելա Գրիգորյանի հետ, 28.06.2007 թվականին՝ Լիդա Գրիգորյանի հետ:

2. Ըստ պայմանագրի 3.1 կետի՝ ձեռնարկությունում կատարվում է երկկողմանի հաշվարկ ինչպես տնօրինության կողմից, այնպես էլ վաճառողի, գանձապահի համարակալված և կնքված ու կարված ապրանքների հաշվառման գրքում:

3. Ըստ պայմանագրի 3.2 կետի՝ սկսած ապրանքի ձեռք բերումից ապրանքների գրանցման և հաշվառման գրքում գործադիր տնօրենը կրում է լրիվ նյութական պատասխանատվություն՝ ստացած ապրանքների և դրամական միջոցների ապրանքների վաճառքից:

4. 12.04.2008 թվականի ստուգմամբ հայտնաբերված 8.968.000 դրամ պակասորդից 11.11.2008թ. Մարինա Բարսեղյանը, Լիդա Գրիգորյանը և Ստելա Գրիգորյանը պարտավորվել են յուրաքանչյուրը վերականգնել 2.199.000 դրամ, մինչև 2012 թվականը՝ կատարելով ամենամսյա մասնակի վերականգնում:

5. 16.02.2010 թվականին Ընկերության և պատասխանողների միջև ստորագրվել է փաստաթուղթ, որ պատասխանողները խախտել են 15.02.2009թ.-30.01.2010թ. լրիվ նյութական պատասխանատվության մասին պայմանագրի պահանջները և նրանց կողմից պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու արդյունքում երևան է հանվել 1.457.000 դրամ արժողությամբ տարբեր նյութական արժեքների պակասորդ:

6. 2010 թվականի հոկտեմբերի 4-ին դատական նիստում պատասխանող կողմի միջնորդությունը դատարանը բավարարել է և որոշել Ընկերությունից պահանջել 28.06.2007 թվականից մինչև 12.04.2008 թվականը և 15.02.2009 թվականից մինչև 30.01.2010 թվականը ժամանակահատվածների ապրանքանյութական արժեքների մուտքագրման և էլքագրման մատյանները, նույն ժամանակահատվածների գույքագրման ակտերը, հարկային և վիճակագրական ծառայություններ ներկայացված ամենամսյա և եռամսյակային հաշվարկները, 01.01.2008 թվականի դրությամբ կատարված գույքագրման արդյունքները և գույքագրում անցկացնելու կապակցությամբ արձակված հրամանը: 25.10.2010 թվականի կատարողական վարույթն ավարտելու մասին որոշման համաձայն՝ Ընկերությունը հայտարարել է, որ նշված փաստաթղթերը «ԳՏԳ» ՄՊԸ-ում չեն պահպանվում:

**4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.**

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի սահմաններում Գերագույն դատարանը գտնում է, որ այն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ:

Նշված նորմի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերն որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա, իսկ նույն հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նշված հոդվածից հետևում է, որ յուրաքանչյուր գործով կողմերի միջև ապացուցման պարտականությունը ճիշտ բաշխելու համար դատարանն առաջին հերթին պետք է պարզի յուրաքանչյուր գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը՝ ելնելով գործին մասնակցող անձանց պահանջներից և առարկություններից: Ընդ որում, գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի առկայությունը կամ բացակայությունը վիճելի լինելու դեպքում դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 45-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործին մասնակցող անձը, որը հնարավորություն չունի անհրաժեշտ ապացույցն ինքնուրույն ձեռք բերել գործին մասնակցող կամ չմասնակցող այլ անձից, որի մոտ այն գտնվում է, իրավունք ունի տվյալ ապացույցը պահանջելու միջնորդությամբ դիմել դատարան:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի հանգամանքները, որոնք օրենքի կամ այլ իրավական ակտերի համաձայն պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Սույն գործով պատասխանողների կողմից Ընկերությանը վնաս պատճառելու փաստի առաջացման պարտականությունը Դատարանը դրել է Ընկերության վրա: Գործի քննության ժամանակ պատասխանող կողմը միջնորդել է Ընկերությունից պահանջել 28.06.2007թ. մինչև 12.04.2008թ. և 15.02.2009թ. մինչև 30.01.2010թ. ժամանակահատվածների դրությամբ գույքագրման անցկացման արդյունքները, ապրանքանյութական արժեքների մուտքագրման և ելքագրման մատյանները և այլ ապացույցներ: Սակայն Ընկերությունը գույքագրում անցկացնելու վերաբերյալ ապացույց չի ներկայացրել, իսկ ապացույցները հարկադիր կարգով պահանջելու կատարողական վարույթի ընթացքում տնօրենը հայտարարել է, որ պահանջվող փաստաթղթերը Ընկերությունում չեն պահպանվում:

Դատարանը հայցը մերժելիս պատճառաբանել է, որ Ընկերությունում գույքագրում չի անցկացվել, առկա չեն ապրանքանյութական արժեքների հաշվառման փաստաթղթեր և հարկային հաշվետվություններ չեն ներկայացվել, իսկ Ընկերության և պատասխանողների միջև կնքված լրիվ նյութական պատասխանատվության պայմանագրերի 3.2 կետով ապրանքների և դրամական միջոցների համար նյութական պատասխանատվություն կրում է գործադիր տնօրենը, որ Ընկերությունը չի ապացուցել, թե ինչպիսի և ինչ քանակությամբ նյութական արժեքներ են հանձնվել պատասխանողներից յուրաքանչյուրին, որքան է պակասորդը, պատասխանողների ինչպիսի գործունեության հետևանքով է պատճառվել վնասը, առկա է արդյոք պատասխանողների գործունեության և վնասի ապացուցման միջև

պատճառական կապը, ինչպես նաև պատասխանողներից յուրաքանչյուրի մեղքի աստիճանը, որ հետագուոված ապացույցներով վիճելի է մնում պատասխանողների կողմից Շնկերությանը վնաս պատճառելու փաստի առկայությունը:

«Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բոլոր կազմակերպությունները պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում, իսկ 17-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով կազմակերպությունն անցկացնում է ակտիվների և պարտավորությունների գույքագրում, որը պարտադիր է նաև տարեկան հաշվետվությունները կազմելուց առաջ, գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի բացահայտման դեպքերում:

ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության 24.09.2003թ. N 138 հրամանով հաստատված «Կազմակերպությունների ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգ»-ի 1.5 կետի համաձայն՝ գույքագրման անցկացումը պարտադիր է տարեկան ֆինանսավորման հաշվետվությունները կազմելուց առաջ՝ հաշվետու տարվա նոյեմբերի 1-ից ոչ շուտ....

Նույն հրամանի 1.6 կետի համաձայն՝ պարտադիր գույքագրումների ժամանակ գույքագրման ենթակա են՝ ա) տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմելուց առաջ՝ կազմակերպության բոլոր ակտիվներն ու պարտավորությունները... դ) գույքի հափշտակման, փչացման և կորստի փաստերի հայտնաբերման դեպքում՝ տվյալ նյութական պատասխանատու անձի պատասխանատվության տակ գտնվող ամբողջ գույքը. ե) նյութական պատասխանատու անձանց փոփոխման դեպքում՝ ընդունվող-հանձնվող գույքը...:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Գերագույն դատարանը գտնում է, որ Դատարանն իրավացիորեն է վնաս պատճառելու փաստի ապացուցման պարտականությունը դրել հայցվոր կողմի վրա, գտնելով, որ պակասորդի առաջացման փաստը կարող է ապացուցվել նշված ժամանակահատվածում Շնկերությունում գույքագրում անցկացնելու, պատասխանողներին ապրանքանյութական արժեքներ հանձնելու, հաշվառման և հարկային հաշվետվության վերաբերյալ փաստաթղթեր ներկայացնելով, որ վնասի առաջացումը պետք է հաստատվի նշված ապացույցներով, իսկ Շնկերությունը նշված ապացույցները չի ներկայացրել, և վիճելի է մնացել վնաս պատճառելը, վնասի առկայությունը:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանն ապացուցման պարտականությունը դրել է պատասխանողների վրա, գտնելով, որ պատասխանողները չեն ապացուցել վնասի առաջացման մեջ իրենց մեղքի բացակայությունը:

Գերագույն դատարանը գտնում է, որ նման հանգամանքներում Վերաքննիչ դատարանը սխալ է բաշխել ապացուցման բեռը, ապացուցման պարտականությունը դնելով պատասխանողների վրա:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 230-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ վերաքննիչ դատարանի որոշման մեջ պետք է նշվեն գործով պարզված և վերաքննիչ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, ինչպես նաև այն օրենքը, ... և այլ իրավական ակտերը, որոնցով ղեկավարվել է վերաքննիչ դատարանը որոշում կայացնելիս:

Մինչդեռ սույն գործով Վերաքննիչ դատարանը որոշման պատճառաբանական մասում չի նշել, թե ինչ ապացույցների վերլուծության և գնահատման արդյունքում է եզրակացություն արել պատասխանողների կողմից իրենց պարտականությունը պատշաճ չկատարելու և վնաս պատճառելու վերաբերյալ: Ավելին, գտնելով, որ Դատարանը լրիվությամբ և բազմակողմանիորեն չի հետազոտել գործի բոլոր ապացույցները, Վերաքննիչ դատարանը մեկնաբանելով հայցվորի և պատասխանողի միջև կնքված լրիվ նյութական պատասխանատվության պայմանագրում նշված «գործադիր տնօրեն» բառակապակցությունը, անհիմն ղեկավարվելով ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 231-րդ և 232-րդ հոդվածներով, դուրս է եկել վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների

սահմաններից, խախտելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 229-րդ հոդվածի պահանջները:

ԼՂՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր որ իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի մատնանշելու նույնանման փաստական հանգամանքներով մեկ այլ գործով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները): Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով Գերագույն դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Գերագույն դատարանը գտնում է, որ ԼՂՀ Գերագույն դատարանի դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս, դատարանը պետք է համադրի նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը:

Գերագույն դատարանի 04.06.2009 թվականի N 002-39/2009թ. գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Լ. Պետրոսյանն աշխատելով հայցվորի խանութում որպես վաճառող, պայմանագրի համաձայն պարտավոր էր կրել լիակատար նյութական պատասխանատվություն գործատուի այլ նյութական արժեքների և իր պահպանությանը հանձնված արժեքների՝ իր մեղքով իր կողմից պատճառված վնասի համար և 09.04.2008թ. հանձնաժողովի կազմում Լ. Պետրոսյանի մասնակցությամբ կատարվել է Ընկերությունում նյութական արժեքների ստուգում՝ գույքագրում, և հայտնաբերվել պակասորդ. Լ. Պետրոսյանին առաջարկվել է կրկին ստուգում կատարելու համար հրավիրել իր ցանկացած մասնագետի, Լ. Պետրոսյանը հրաժարվել է, ստորագրել ստուգման ակտի արդյունքների ճշտությանը, տվել գրություն վնասն իր կողմից վերականգնելու պարտավորության մասին:

Ընդ որում, ապրանքանյութական արժեքները Լ. Պետրոսյանին հանձնվել և նրա կողմից ընդունվել է՝ գրանցելով գրանցամատյանում, գրանցումն անձամբ կատարել է Լ. Պետրոսյանը:

Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ Գերագույն դատարանի N 002-39/2009թ. քաղաքացիական գործով (ըստ հայցի «Սպորտ» ՍՊԸ ներկայացուցիչ Ջ. Մուսայելյանի ընդդեմ Լիդա Պետրոսյանի՝ 812.000 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին) 04.06.2009թ. որոշումը, քանի որ դատարանի նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար, և այնուհետև, դրանք համադրի քննվող քաղաքացիական գործի փաստական հանգամանքների հետ, որոշելով դրանց նույնական լինելու կամ չլինելու հարցը:

Մինչդեռ Վերաքննիչ դատարանը չպարզելով վերոնշյալը, չորոշելով դրանց նույնական լինելու հարցը, որ այն նույնական չէ սույն գործի փաստական հանգամանքների նկատմամբ, կիրառել է Գերագույն դատարանի 002-39/2009թ. քաղաքացիական գործով 04.09.2009թ. որոշումը, որը չպետք է կիրառեր:

Այսպիսով, վճռաբեկ բողոքում նշված հիմքերի առկայությունը Գերագույն դատարանը դիտում է բավարար, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ և 241-րդ հոդվածների ուժով, Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի

դատական ակտին օրինական ուժ տալու՝ Գերագույն դատարանի լիազորությանը՝ հետևյալ հիմնավորմամբ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ողջամիտ ժամկետում իր գործի քննության իրավունք: Սույն քաղաքացիական գործով վեճի լուծումն էական նշանակություն ունի գործին մասնակցող անձանց համար: Գերագույն դատարանը գտնում է, որ գործի ողջամիտ ժամկետում քննելը հանդիսանում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի նույն հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքի տարր: Հետևապես, գործի անհարկի ձգձգումները վնաս են պարունակում նշված իրավունքի խախտման տեսանկյունից: Այս դեպքում Գերագույն դատարանի կողմից ստորադաս դատարանի դատական ակտին օրինական ուժ տալը բխում է արդարադատության արդյունավետության շահերից, որոշման վերոշարադրյալ պատճառաբանություններից, ինչպես նաև, որ գործով վերջնական ակտ կայացնելու համար նոր հանգամանք հաստատելու անհրաժեշտությունը բացակայում է:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, ԼՂՀ Գերագույն դատարանը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Պատասխանողներ Մարինա Բարսեղյանի, Ստելա Գրիգորյանի և Լիդա Գրիգորյանի վճռաբեկ բողոքը բավարարել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2011թ. հունվարի 28-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. նոյեմբերի 29-ի վճռին:

2. «ԳՏԳ» ՍՊԸ-ից բռնագանձել 219.114 (երկու հարյուր տասնինը հազար հարյուր տասնչորս) ՀՀ դրամ որպես վճռաբեկ բողոքի համար վճարման ենթակա պետական տուրքի գումար:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Կ. ՂԱՐԱՅԱՆ**

**ԴԱՏԱՎՈՐՆԵՐ**

**Շ. ՕՉԱՆՅԱՆ**

**Զ. ՕՉԱՆՅԱՆ**